683

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1951 Թ.

Ա Ա 1005 / Ա II / 250ա

# ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԻ ՅԵՎ ՀԱՐԱՎԻ ՊՈԼԻԳՐԱՖ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ

# ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(Структура)

# ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հաստատված է պոլիգրաֆ բանվորների արհմիության կենտկոմի նախ․գահության կողմից 1937 թ. 13/IV-ի

ՊԵՏՀՐԱՏ 1937 ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՖՈՒՆԴ. ԳՐԱԴԱՐԱՆ

Պետհրատի տպարան, Երևան

Գլավլիտի լիազոր Հ— 5612· Պատվեր 854· Տիրաժ 200

# ԳՈՐԾԱՐԿՈՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Ընդհանուր ժողովը հանդիսանում է ձեռնարկության պրոֆկազմակերպության բարձրագույն մարմինը:

## ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ ԸՆՏՐՈՒՄ Է

ա) Գործարկոմի անդամներ 5—25 մարդ,

բ) Վերստուգիչ Հանձնաժողովի անդամներ 3—5 մարդ,

գ) Արտադրական–ընկերական դատարանի նախագահ և 3 անդամներ (նրանցից մեկը պահեստային):

## ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ընտրում է նախագահ և հանձնաժողովի քարտուղար, կանոնավոր, ամիսը մեկ անգամ ստուգում է գործարկոմի ֆինանսական գործունեությունը: Ստուգման արդյունքների մասին տեղեկացնում է միության անդամներին և վերադաս պրոֆկազմակերպությանը: Իր աշխատանքներում ղեկավարվում է վերստուգիչ հանձնաժողովների վերաբերյալ յեղած կանոնադրությամբ:

## ԱՐՏԱԴՐԱԿԱՆ–ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

*Իր աշխատանքներում ղեկավարվում է 1931 թ. փետրվարի 20–ին ՌՍՖԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից հաստատված օրենքով, ՀԱՄԿԽ–ի քարտուղարության և ՌՍՖԽՀ Արդժողկոմատի կոլեգիայի 1932 թ. մայիսի 13–ի վորոշումով և ՀԱՄԿԽ–ի նախագահության ու ՌՍՖԽՀ Արդժողկոմատի 1933 թ. փետրվարի 27–ի վորոշումով:*

## ԳՈՐԾԱՐԿՈՄԻ ԿՈՂՄԻՑ ԸՆՏՐՎՈՒՄ ԵՆ

*ա) Գործարկոմի նախագահ, նա ինքը նախագահն է ապահովագրական խորհրդի,*

*բ) Գործարկոմի նախագահի տեղակալ:*

*Գործարկոմի մնացած անդամները բաշխվում են աշխատանքների հետևյալ մասերում.—*

*ա) մասսայական–արտադրական աշխատանք և աշխատավարձ,*

*բ) աշխպաշտպանություն,*

*գ) ԳԿՀ–ի ներկայացուցիչ բանվորական մասից,*

*դ) կուլտ–մասսայական աշխատանք,*

*յե) ֆինանսական աշխատանք,*

*զ) Բանվորական մասսայական կոնտրոլի խմբակ:*

*Հանձնաժողովներն աշխատում են գործարկոմի ղեկավարությամբ: Հանձնաժողովներին ղեկավարում են գործարկոմի անդամները:*

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ (ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ)

## 1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

*Տես ապահովագրական խորհրդի աշխատանքների կանոնադրությունը, հաստատված Կենտկոմի 3-րդ պլենումում 1936 թ. սեպտեմբերի 25—28-ը, հանելով այն ֆունկցիաները, վորոնք նախատեսված են աշխպաշտպանության մեջ։*

## 2. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

1) *Սոցմրցման, հարվածայնության կազմակերպումը և ստախանովյան շարժումը։*

2) *Խմբակային, ցեխային և համագործարանային արտադրական խորհրդակցության կազմակերպում և անցկացում։*

3) *Արտադրական աշխատանքի փորձի փոխանակման կազմակերպում։*

4) *Մասնակցություն պետ. տեխ. քննությունների անցկացմանը։*

5) *Արտադրական պրոպագանդայի անցկացում։*

6) *Աշխատանք հետ մնացող բանվորների հետ։*

7) *Աշխատանք գերազանցիկների հետ, պայքար խոտանի դեմ և միջոցառումների մշակում արտադրանքի վորակը բարձրացնելու գործում։*

8) *Կոնտրոլ բանվորական առաջարկությունների և գյուտարարությունների կատարման համար։*

9) Կոնտրոլ բանվորական տեղի կազմակերպման համար:

10) Կոնտրոլ մշակված արտադրանքի նորմաների իրացման համար:

11) Կոնտրոլ տեխ. կրթության անցկացման համար:

12) Կոնտրոլ տեխմինիմումի աշխատանքների համար:

13) Կոնտրոլ սարքավորման ճիշտ օգտագործման համար:

14) Կոնտրոլ սոցմրցման ֆոնդի ճիշտ օգտագործման համար:

15) Կոնտրոլ աշխատավարձի ճիշտ հաշվելու և վճարելու համար:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Կոնտրոլի կազմակերպում՝ տնտմարմինների կողմից աշխօրենսդրությունը ճիշտ կատարելու համար:

բ) Կոնտրոլի կազմակերպում՝ անչափահասների աշխատանքի պաշտպանության գործում, ղեկավարվելով աշխօրենսդրության համաձայն:

գ) Կոնտրոլի կազմակերպում՝ ձեռնարկության, ցեխերի, զուգարանների, բանվորական վայրերի առողջապահորեն ճիշտ պահպանումի համար: Բացատրական աշխատանք աշխատավորների անձնական առողջապահության համար:

դ) Հսկել մասնագիտական հագուստները ժամանակին տալու խնդրին, այդպիսիք լվալու և նորոգելու վրա:

յե) Հսկել, վորպեսզի ժամանակին տրվեն պահպանման հարմարությունները, չեզոքացնող նյութերը (կաթ):

զ) Հսկել ձեռնարկության, ցեխերի և բաժինների խմելու ջրի սարքավորման-մաքրության դրության վրա:

ե) Հսկողություն տաքացման, ոդափոխության, ձեռնարկության և բանվորական վայրերի լուսավորության վրա:

ը) Դժբախտ պատահարներ և պրոֆթունավորումներ առաջացնող պատճառների ուսումնասիրման կազմակերպում, հսկողություն վարչության կողմից տրված հրահանգավորումների վրա, վոր տրվում է մեխանիզմների հետ կապված բանվորներին, հսկողություն աշխատանքի պաշտպանության և տեխանվտանգության գումարների ծախսման վրա:

թ) Հսկողություն սահմանել մեխանիզմների վտանգավոր մասերի, ռուբիլնիկների, բարձր-հոսանքի լարվածության լարերի (պրովոդների) բաշխիչ վահանների ( ЩИТОВ ) ցանցապատման վրա:

## 4. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍԻՑ ԳԿՀ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՂԵԿԱՎԱՐՎՈՒՄ Ե ԽՍՀՄ-Ի ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ 1928 Թ. ԴԵԿ. 12-Ի ՎՈՐՈՇՈՒՄՈՎ

## 5. ԿՈՒԼՏ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Պոլիգրաֆարդյունաբերության խոշոր ձեռնարկություններում, ստեղծվում են գործարանային կոմի-

տեյի կուլտխորհուրդ, նախագահը, հանդիսանում է գործարկոմի անդամը:

Կուլտխորհուրդն ստեղծում է լայն ակտիվ (ակումբի ներկայացուցիչներ են՝ բազմատիրաժներ, պատի թերթեր, ОСО, ՃՏՍ-ի կանանց խորհուրդ, ՀԼԿՑԵՄ) կուլտ-մասսայական աշխատանքների հիմնական հարցերով.

ա) Մասսայական կրթություն (միջնակարգ կրթության դպրոցներ, անգրագիտության և կիսագրագիտության վերացման, աշխատանք կուլտմարտիկների հետ):

բ) Միության անդամների քաղաքական դաստիարակություն (Ստալինյան Սահմանադրության ուսումնասիրում, խորհուրդների ընտրություններին պատրաստվելը, ծանոթություն միջազգային և ներքին դրության հետ, պարբերաբար ընթերցումների կազմակերպում, թերթերի, ժուռնալների և այլն, զրույցներ և զեկուցումներ):

գ) Գրադարանային աշխատանք:

դ) Պրոֆկադրերի և արտադրական կադրերի պատրաստում:

յե) Ակումբային և կարմիր անկյունների աշխատանք:

զ) Կուլտուրական հանգստի կազմակերպում:

է) Գեղարվեստական ինքնագործունեության կազմակերպում:

ը) Աշխատանք մամուլի հետ (բազմատիրաժներ, պատի թերթեր):

թ) Աշխատանք յերեխաների մեջ:

ժ) Մասսայական աշխատանք (հեղափոխական տոների անցկացում և այլն)։

## 6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հանձնաժողովի մեջ մտնում են անդամավճարներ գանձողները։ Անդամավճարներ գանձողներն ընտրվում են պրոֆմիության անդամների ընդհանուր ժողովներում ըստ խմբակների, բրիգադների, բաժինների, այն հաշվով, որ մեկ անդամավճար գանձողը լինի ոչ ավել 25 հոգու համար։

Այն ձեռնարկություններում, որտեղ աշխատում է 50 հոգուց պակաս, անդամավճարների գանձումը կատարում է գանձապահը։

Հանձնաժողովի հիմնական պարտականությունները հանդիսանում են.—

ա) Անդամավճարների լրիվ և ժամանակին գանձումը միության անդամների փաստացի աշխատավարձի բոլոր գումարներից և անդամավճարների ժամանակին հանձնումը ըստ պատկանելույն։

բ) Միության անդամների հաշվառում. պրոֆտոմսերի, պրոֆմարկաների, հաշվային քարտերի պահպանում, հաշվառում և հանձնում։

գ) Պրոֆբյուջեի միջոցների նպատակային և ճիշտ ծախսման վրա հսկողություն, մասնակցություն նախահաշիվները կազմելիս և միության անդամների ու պրոֆկազմակերպության առաջ սիստեմատիկ ֆինանսական հաշվետվություն տալու ժամանակ։

## 7․ ԲԱՆ–ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ԿՈՆՏՐՈԼ) ԽՄԲԱԿԸ ԿԱՏԱՐՈՒՄ Ե ԳՈՐԾԱՐԿՈՄԻ ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ

## ՑԵԽԻ ՊՐՈՖԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1․ *Ընդհանուր ժողովը հանդիսանում ե ցեխի պրոֆկազմակերպության բարձրագույն մարմինը։*

*Ցեխային կոմիտեներ ստեղծվում են ցեխերում 50 հոգուց վոչ պակաս աշխատողներ լինելու դեպքում։*

*Այն ցեխերում, վորտեղ աշխատավորները 50 հոգուց պակաս են, ընտրվում են պրոֆկազմակերպիչներ։*

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆ ԸՆՏՐՈՒՄ Ե․—

*ա) Ցեխային կոմիտեների անդամներ 5–11 հոգուց։*

*բ) Արտադրական–ընկերական դատարանի նախագահ և անդամներ (արտադրական–ընկերական դատարանները կազմակերպվում են այն ցեխերում, վորտեղ 100 հոգուց ավելի աշխատողներ կան)։*

### 2․ ՑԵԽԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԸՆՏՐՎՈՒՄ ԵՆ․—

*ա) Ցեխային կոմիտեյի նախագահ։*

*Ցեխային կոմիտեյի մնացած անդամները բաշխվում են աշխատանքների հետևյալ մասերի․—*

*բ) Մասսայական–արտադրական աշխատանք և աշխատավարձ,*

*գ) Կուլտ–մասսայական աշխատանք։*

*դ) Աշխատապաշտպանություն,*

*յե) Ֆինանսական աշխատանք,*

դ) Սոցապ,

ե) Բանվորական մասի ԳԿՀ-ի ներկայացուցիչ։

Այդ աշխատանքների ֆունկցիաները նախատեսըված են գործարկոմի կառուցվածքում։

Ցեխպրոֆկազմակերպիչը կատարում է նույն աշխատանքը, ինչ որ ցեխային կոմիտեները, դրա համար ներգրավելով կամավորների լայն ակտիվ։

## ՊՐՈՖԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

1. Պրոֆխմբակը կառուցվում է ըստ արտադրական սկզբունքի։

2. Ընդհանուր ժողովը հանդիսանում է պրոֆ. խմբակի բարձրագույն մարմինը։

3. Պրոֆխմբակի ընդհանուր ժողովը, որտեղ աշխատողները 10 հոգուց պակաս չեն, ընտրում է.—

ա) Պրոֆկազմակերպչին,

բ) Անդամավճարներ գանձողին,

գ) Ապահովագրական պատգամավորին։

Գործարկոմը ղեկավարում է ՃՏՍ-ի, մեքենագրաչարների սեկցիայի, ՓՈԴ-ի և ֆիզկուլտ աշխատանքները։

Գործարկոմն օժանդակում է կամավոր ընկերությունների աշխատանքներին.— OCO, ՄՈՊՐ, գյուտարարների տեղական բջիջներ և այլն։ Հիշյալ ընկերություններն իրենց աշխատանքներում ղեկավարվում են ընկերության կանոնադրությամբ և օրենքներով։

---

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՈԼԻԳՐԱՖԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՐՈՖԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



2417